



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիդյան

«21» 12 2023թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0239-23

**Ձեռնարկողը՝**

**«Սոյուզոն» ՍՊԸ**  
ք. Երևան, Կոմիտաս 27/1

**Գործունեությունը՝**

**«Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. անտառշինական նախագիծ (անտառկառավարման պլան)» կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ուղղակի և անուղիղ գնահատման հաշվետվություն**  
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

ԲՓ № 0239-23

« 21 » դեկտեմբեր 2023թ.

**«Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. անտառաշինական նախագիծ (անտառկառավարման պլան)» շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն**

**Ներածական մաս.**

Ձեռնարկող՝

«Սոլյուտոն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրությային փաստաթուղթ

- շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, անտառկառավարման պլան, գծագրական նյութեր

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառկառավարման պլանի նախագծահետազոտական աշխատանքներն իրականացվել են «ՍՈԼՅՈՒՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից՝ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի հետ կնքված՝ ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-22/03-1 պայմանագրի համաձայն:

Փաստաթղթի նպատակն է Արագածոտնի անտառտնտեսության անտառաշինության արդյունքների մշակումը և այդ անտառտնտեսության վարումը: «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի համար իրականացված անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարման նպատակով կազմվել են համապատասխան նախագծեր, որոնք տալիս են անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, Արագածոտնի անտառտնտեսության անտառկառավարման պլանը հանդիսանում է հիմնադրությային փաստաթուղթ:

**Նկարագրական մաս.** «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Արագածոտնի մարզում, այն արևելքից սահմանակից է «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին, իսկ հյուսիսից ու հյուսիս-արևելքից մասնակիորեն հարում է «Գյումրու անտառտնտեսություն» և «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառային հողերին: Մասնաճյուղի ընդհանուր մակերեսը ձևավորվել է Ապարանի անտառտնտեսության Ապարանի և Արագածի անտառապետությունների, Երևանի անտառտնտեսության, Բյուրականի և Թալինի անտառտնտեսությունների մասնակի միավորումների արդյունքում: Ըստ 1983-1990 թվականներին տվյալ անտառտնտեսություններում կատարված անտառաշինական աշխատանքների նյութերի, հաշվարկված է Արագածի անտառապետությունը՝ 1484 հա, Ապարանի անտառապետությունը՝



5741 հա, Բյուրականի անտառապետությունը՝ 2804 հա և Թալինի անտառտնտեսությունը՝ 2216 հա:

Արագածոտնի անտառտնտեսության տարածքը հիմնականում գտնվում է Արագածոտնի մարզում (98.5 %-ը՝ Արագածոտնի, իսկ 1.5 %-ը՝ Կոտայքի մարզերում): Անտառտնտեսության տարածքն ընկած է Մեծամորի գետավազանի Քասախ և Սելավ-Մաստարա գետավազանների ջրհավաք ավազաններում: Անտառտնտեսության տարածքի հիմնական մասն ընկած է Քասախի գետավազանում՝ մոտ 85 %-ը:

Անտառտնտեսության տարածքով անցնող գլխավոր գետը Քասախն է, որը սկիզբ է առնում Փամբակի լեռնաշղթայի արևմտյան մասի հարավային լանջերի 2300-2350 մ բարձրություններից և թափվում Մեծամոր գետ: Ունի 89 կմ երկարություն, ավազանի մակերեսը՝ 1480 կմ<sup>2</sup> է:

«Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի արտաքին սահմաններն անցնում են վեց համայնքներով՝ Ալազյազ, Ծաղկահովիտ, Ապարան, Աշտարակ, Թալին և Եղվարդ:

Ալազյազ, Ծաղկահովիտ համայնքերում, Ապարան համայնքի հյուսիսային և կենտրոնական մասերում անտառտնտեսության արտաքին սահմաններն անցնում են Ծաղկունյաց լեռնաշղթայի արևմտյան և հարավարևմտյան լանջերով: Ապարան համայնքի հարավում անտառտնտեսության արտաքին սահմաններն անցնում են Արայի լեռան հյուսիսային լանջերով:

Աշտարակ համայնքում անտառտնտեսության արտաքին սահմաններն անցնում են Արագածի հարավարևելյան լանջերով: Թալին համայնքում արտաքին սահմաններն անցնում են Արագածի հարավ-արևմտյան լանջերով: Եղվարդ համայնքում արտաքին սահմաններն անցնում են Արայի լեռան արևելյան լանջերով:

Համաձայն հաշվետվության՝ անտառապետություններն իրենց հերթին տարիների ընթացքում տարբեր հրամաններով տարանջատվել են ու վերակազմավորվել, ինչի արդյունքում ձևավորվել է գործող՝ Արագածի՝ 4402հա, Երնջատափի՝ 2824հա, Բյուրակնի՝ 3622հա մակերեսով անտառապետությունները:

Ըստ հաշվետվության՝ մարզում կադաստրային գրանցմամբ անտառային հողերի մակերեսը կազմում է 10164 հա:

Մասնաճյուղի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածք ներառված չէ, առկա է «Արայի լեռ» կարևոր թռչնաբանական տարածքը, ինչպես նաև «Էմերալդ» ցանցի «Արայի լեռ» թեկնածու տարածքը: Վերջինիս տարածքը զբաղեցնում է 4676,7 հա մակերես, տեղակայված է Կոտայքի և Արագածոտնի մարզերում:

Մասնաճյուղի սահմաններում է տեղակայված համանուն որսահանդակը, որը ներառված է ՀՀ կառավարության կողմից հաստատված որսահանդակների ցանկում: Տարածքում հանդիպող սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանատեսակներից են գայլ, շնագայլ, աղվես, գորշուկ, քարակզաքիս, լուսան, նապաստակ, վայրի խոզ, այծյամ, քարակաքավ, լոր, մեղվակեր, աղավնիներ, կտցարներ, սև կեռնեխ, դաշտային և տափաստանային արտույտներ, ջրլող թռչուններ:

Անտառային տնտեսության սահմաններում կամ հարակից տարածքներում չկան սահմանային ու ռազմական նշանակության անտառներ:

Տարածաշրջանում առկա անտառային լանդշաֆտներն աչքի են ընկնում մի շարք էկոլոգիական հատկանիշներով, որոնք ունեն կարևոր տարածաշրջանային, հանրապետական ու միջազգային նշանակություն:

Բարդ լեռնային ռելիեֆը, ուղղաձիգ գոտիականությունը, բարձրությունների և հողակլիմայական պայմանների տատանումները պայմանավորում են տարածաշրջանի լանդշաֆտային բազմազանությունը, ձևավորում են տարբեր լանդշաֆտային տիպեր՝



կիսասանապատայինից մինչև լեռնային և ալպյան մարգագետիններ: Արագածոտնի մարզը Հայաստանի այն մարզերից է, որտեղ հանդիպում են հայտնի բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները: Մասնավորապես՝ անտառային տնտեսության համեմատաբար սահմանափակ լանդշաֆտները տեղակայված են մի քանի լանդշաֆտային գոտիներում.

Անտառային ցածր և միջին լեռնային գոտի – 1200-ից 2300 մ ծ.մ,

Տափաստանային միջին լեռնային գոտի – 1400-ից 2300 մ ծ.մ,

Մարգագետնատափաստանային միջին լեռնային - 2200-ից 2600 մ ծ.մ:

Անտառների բաշխվածությունը, ըստ ծովի մակերևույթից բարձրության, տատանվում է 800-2600 մետրի սահմաններում:

Մակերևույթի բարձրությունների մեծ տատանումների շնորհիվ կլիման ևս բազմազան է: Մեծ են ցածրադիր և բարձրադիր մասերի կլիմայական պայմանների տարբերությունները: Ըստ բարձրության՝ տարեկան միջին ջերմաստիճանը և տեղումների քանակը խիստ տարբեր են: Արագածոտնի անտառտնտեսության տարածքում հունվարին օդի միջին ջերմաստիճանը փոփոխվում է -5 մինչև -12°C, իսկ հուլիսին՝ 16-30°C, տարեկան տեղումների քանակը՝ 500-700 մմ:

Արագածոտնի անտառտնտեսության կազմում անտառային հողերը տեղակայված են գերազանցապես Ապարանի ֆլորիստիկ շրջանի սահմաններում, մասնավորապես՝ Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում առկա համակեցությունները, իսկ Աշտարակի տարածաշրջանը մտնում է Երևանի ֆլորիստիկ շրջանի կազմում:

Ապարանի ֆլորիստիկ շրջանում են տեղակայված առավել մեծ մակերեսով անտառային հողերը: Այստեղ հանդիպում 17 տեսակ էնդեմիկներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 26 տեսակներ: Արագածի ֆլորիստիկ շրջանում հանդիպում են 10 էնդեմիկ բուսատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 19 տեսակներ: Երևանի ֆլորիստիկ շրջանում հանդիպում են 46 էնդեմիկ բուսատեսակներ և ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված 144 տեսակներ: Վերջին երկու ֆլորիստիկ շրջանների փոքր մասն է զբաղեցնում անտառային տնտեսության տարածքը: Արագածոտնի անտառտնտեսության անտառային հողերում հանդիպած վտանգված ու անհետացման եզրին գտնվող տեսակների թիվը կազմում է 12, իսկ էնդեմիկների թիվը՝ 8:

Տարածաշրջանի հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող կենդանական աշխարհի տեսակները 71-ն են և ընդգրկված են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում, այդ թվում՝ 34-ը՝ ողնաշարավորներ: Բեռնի կոնվենցիայի 6-րդ բանաձևի մեջ ընդգրկված է 14 տեսակներ:

Արագածոտնի անտառտնտեսության անտառային հողերում հանդիպած վտանգված ու անհետացման եզրին գտնվող տեսակների թիվը կազմում է 43, իսկ Հայաստանի համար էնդեմիկների թիվը՝ 8, նաև 3 տեսակ էնդեմիկ են Կովկասի համար:

Արագածոտնի մարզի կենդանական աշխարհին բնորոշ են հիմնականում լեռնատափաստանային կենդանատեսակները, այդ թվում հանդիպում են կաթնասունների, թռչունների, սողունների ու երկկենցաղների նաև կրծողների ու միջատների բազմաթիվ տեսակներ: Անտառային գոտիներում ու երբեմն նաև հարակից ցածրադիր գոտիների պտղատու այգիներում հանդիպում է խոշոր կաթնասուններից կովկասյան գորշ արջը:

Անտառտնտեսության սահմանների ճշտման, համապատասխանեցման նպատակով, արբանյակային պատկերները համադրվել են կադաստրային քարտեզների ու անտառտնտեսության նախորդ անտառաշինական տվյալների հետ: Այն ծառայել է նաև ֆոտոդրվագների կազմմանը, անցուղիների, քայլային գծերի, տոպոգրաֆիկ իրավիճակների ճանաչման, անտառաշինական աշխատանքների իրականացման ժամանակ անտառում հստակ կողմնորոշման համար:



Արբանյակային պատկերների հիման վրա կատարվել է գնահատման հատվածավորումը:

Մշակվել են հետևյալ բազային քարտեզագրական նյութերը.

- Անտառտնտեսության ներկայիս տարածքի կոորդինատային համակարգը,
- Տարածաշրջանի ռելիեֆը,
- Լեռնագագաթները,
- Տարածաշրջանի բնակավայրերի տեղաբաշխումը,
- Գետային ցանցը,
- Ճանապարհային ցանցը:

Անտառային տնտեսության քառակուսային ցանցի հիման վրա ճշտվել են «Անտառտնտեսություն» մասնաճյուղի, անտառպետությունների, անտառային քառակուսիների և հատվածների սահմանները, համայնքների վարչական սահմաններում այլ նշանակության հողերի հետ համընկնումները:

Համաձայն հանրապետության հողային քարտեզագրական նյութերի՝ անտառտնտեսության տարածքում հանդիպում են լեռնային դարչնագույն, լեռնային գորշ անտառային և լեռնային մարգագետնային հողերի տիպերը:

Արագածոտնի անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն օգտագործվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների՝ տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային, մեղրատու, դեղատու, կերային նշանակության տեսակներ:

Արագածոտնի մարզն ընդգրկում է Արագածի, Ապարանի և Երևանի ֆլորիստիկ շրջանների տարածքները: Արագածի ֆլորիստիկ շրջանին են պատկանում տարածքի վերին գոտիները: Անտառային տնտեսության անտառային հողերով ու հարակից տարածքներով անցնում են 4 զբոսաշրջային հետիոտն արահետներ, որոնք լրացուցիչ զբոսաշրջային գրավչություն են հաղորդում տարածաշրջանին:

Անտառտնտեսության ենթակայության տակ գտնվող անտառային էկոհամակարգերն ունեն բացառիկ նշանակություն անտառային կենսաբազմազանության պահպանության գործում: Դրանք իրենցից ներկայացնում են կենտրոնական Հայաստանի մնացորդային անտառները, որոնք խիստ տուժել են վերջին հարյուրամյակների ընթացքում տեղի ունեցող կլիմայի անցանկալի փոփոխության ու անթրոպոգեն գործոնի արդյունքում:

Սույն անտառային էկոհամակարգերը մաս են կազմում լեռնատափաստանային անտառաճման գոտու, որի սահմաններում առավելագույն խստաշունչ պայմաններն են անտառաճման համար ու հանդիսանում են անտառաճման գոտու շեմ: Սույն գոտու անտառային էկոհամակարգերը կատարում են բացառիկ հողապաշտպան, ջրակարգավորիչ գործառույթ, որտեղից և սկիզբ է առնում մարզի խմելու ջրի աղբյուրների մեծ մասը: Տնկարկների մեծ մասը դեռևս խորհրդային տարիներին ստեղծվել է հենց հակաէրոզիոն նշանակությամբ:

Հիմնական անտառկազմող տեսակներն են այստեղ կաղնին ու սոճին, հաշվի առնելով, որ սոճու բնական անտառները բացակայում են տարածաշրջանում: Լեռնատափաստանային գոտու բուսականությունը ներառում է նաև արոսենու տեսակներ, գիհի, ծորենի, հաղարջենի, էֆեդրա, դժնիկ, ցախակեռաս, մասրենի և այլն: Առանձին գոտիներում հանդիպում են նաև տանձենի, բալենի, սալորենի, ռոբինիա կողձակացիա, ուռենի, բարդի, կիպրոս և այլն:

Կենսաբազմազանության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն լեռնամարգագետնային լանդշաֆտները: Այդուհանդերձ դենդրոֆլորան ծայրահեղ աղքատ է տվյալ գոտում, որտեղ հիմնականում հանդիպող տեսակներն են ռոբինիա կեղծակացիան,



թխկին, թեղին, ուռենու և բարդու որոշ տեսակներ: Թփերից հանդիպում են գերիմաստի, հաղարջենի, սզնի և այլն:

«Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառային հողերում բնական անտառների մեծ մասը կաղնու համակցություններ են, որոնք գերազանցապես ցածրաբուն են և ունեն երկրորդային ծագում: Չնայած դրանց ցածր արտադրողականության ու տնտեսական նվազ արժեքի՝ էապես կարևորվում է բնապահպանական նշանակությունը:

Հսկայական զանգվածներ են զբաղեցնում սոճու տնկարկները: Թեև միատարրության պատճառով դրանք բարձր խոցելիության աստիճան ունեն, այդուհանդերձ ածխաթթու գազի կարևոր կուտակիչներ են:

Լեռնային անտառները մարզում լեռնային գետերի ձևավորման ու գրունտային ջրերի կուտակման կարևորագույն պայման են: Անտառների մեծ մասը կատարում են հակաէրոզիոն նշանակությամբ հողապաշտպան գործառույթ:

Բնական անտառներն ու անտառային լանդշաֆտները հարուստ են կենսաբազմազանությամբ:

Բարձրլեռնային լանդշաֆտները նաև բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ տեսակների պոտենցիալ պահպանավայրեր են, հատկապես կլիմայի փոփոխության արդյունքում դեպի վերին ուղղաձիգ գոտիներ պոպուլյացիաների տեղաշարժման ընթացքում:

Անտառկառավարման նախագծումն առաջիկա վերստուգիչ ժամանակաշրջանի համար անտառտնտեսական միջոցառումների մշակման ու հիմնավորման գործընթաց է: Պլանավորման խնդիրներն են անտառտնտեսական միջոցառումների ծավալների որոշումը՝ ըստ օգտագործման տեսակի, ժամանակի և տարածքի նախագծվող միավորի մակարդակով:

Համաձայն անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգի՝ անտառկառավարման նախագծի մշակման աշխատանքները բաղկացած են 2 հիմնական փուլերից (նախապատրաստական և հիմնական), որոնք փոխկապակցված են միմյանց հետ, այդուհանդերձ, հետևելով պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ին (տեխնիկական բնութագիր), մեր կողմից դրանք բաժանվել են առավել սպեցիֆիկ խնդիրներ և նպատակներ արտահայտող 3 փուլերի: Ստորև ներկայացվում է տվյալ փուլերի նկատմամբ պահանջները՝ համաձայն տեխնիկական բնութագրի:

Նախապատրաստական աշխատանքներն իրականացվել են նախքան դաշտային աշխատանքների մեկնարկը: Դրա շրջանակում կատարվել է անտառտնտեսության ներկա իրավիճակի նախնական գնահատում՝ ըստ անտառպետությունների և հետագա պլանավորման սկզբունքների նախանշում, որի միջոցով հենք է պատրաստվել դաշտային ու կամերալ աշխատանքների որակյալ ընթացքի համար:

Իրականացվել է անտառային տարածքների գույքագրման նախապատրաստում, իրականացում և վերլուծություն:

Կատարվել է անտառտնտեսական միջոցառումների վերլուծություն և պլանավորում, անտառկառավարման պլանի բաժինների մշակում և նախագծի մշակում:

Համաձայն ծրագրի, իրականացվել է Արագածոտնի անտառկառավարման պլանի գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,

- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,
- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,



- նախորդ անտառշինության պլանշետների, անտառծառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,
- ժամանակավոր օգտագործման հատկացված հողերի քարտեզագրական նյութերի ձեռք բերում և ուսումնասիրություն,
- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ իրավաբանական ձևակերպումների ուսումնասիրություն,
- անտառսերմնային տեղամասերի, տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,
- հարակից համայնքների հետ անտառշինական և համայնքների կադաստրային քարտեզներում առկա անտառային հողատեսքերի անհամապատասխանությունների ճշտման աշխատանքներ:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման ու սահմանազատման, ինչպես նաև էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Համաձայն հաշվետվության անտառտնտեսության ընդհանուր տարածք բաժանված է ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի.

Արտադրական նշանակության ընդհանուր հողատեսքերը զբաղեցնում են 3285.5հա անտառածածկ և ոչ անտառածածկ հողերում:

Պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է 8040.2հա:

Անտառտնտեսության ընդհանուր հողատեսքերում անտառածածկ մակերեսը 5872.2հա է:

Ոչ անտառածածկ մակերեսը կամզում է 4228.0հա:

Ոչ անտառային հողերի մակերեսը կազմում է 1209.9հա:

Համաձայն հաշվետվության՝ «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի համար անտառկառավարման պլան է մշակվում առաջին անգամ: «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղը 2007 թ., որը բաղկացած է եղել 3 անտառապետությունից՝ Ապարանի, Արագածի, Երնջատափի, որոնց 2009 թվականին միավորվել է նաև Բյուրականի անտառապետությունը: Վերջինս ներառում էր Երևանի անտառտնտեսությունից առանձնացված Բյուրականի և Թալինի անտառապետությունները: «Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի 2011 թվականի օգոստոսի 8-ի թիվ 37 հրամանով Ապարանի անտառապետության պահաբաժինները միավորվել են Արագածի ու Երնջատափի անտառապետություններին ձևավերելով հետևյալ կառուցվածքը՝ Արագածի անտառապետություն, Երնջատափի անտառապետություն և Բյուրականի անտառապետություն:

Անտառապետություններում գնահատման միջին ցուցանիշները 2022թ. հետևյալն է՝

Արագածի անտառապետություն – միջին տարիքը՝ 56, միջին բունիտետային դասը՝ 4.7, միջին լրիվությունը՝ 0.55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 73 խմ:

Երնջատափի անտառապետություն – միջին տարիքը՝ 51, միջին բունիտետային դասը՝ 4.9, միջին լրիվությունը՝ 0.67, 1 հեկտարի միջին պաշարը՝ 66 խմ:

Բյուրականի անտառապետություն – միջին տարիքը՝ 41, միջին բունիտետային դասը՝ 5.3, միջին լրիվությունը՝ 0.53, 1 հեկտարի միջին պաշարը՝ 35 խմ:

Համաձայն հաշվետվության՝ անտառտնտեսության սահմաններում անտառի միջին տարիքը 51 է, միջին լրիվությունը՝ 0.59, անտառածածկ մակերեսի 1 հեկտարի միջին պաշարը՝ 63 խմ, միջին տարեկան աճը՝ 1.3 խմ:

2023-2033թթ համար անտառվերականգնման հատումներ նախատեսվել են ընդհանուր 187,9 հա անտառածածկ հատվածներում, ընդհանուր պաշարը՝ 15274 խմ, հատման համար



նախատեսված ընդհանուր պաշարը՝ 1222 խմ, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 1101 խմ, որից շինափայտի պաշարը՝ 0 խմ, վառելափայտը՝ 1101 խմ:

2023-2033թթ համար խնամքի հատումներ նախատեսվել են ընդհանուր 578,1 հա անտառածածկ հատվածներում, ընդհանուր պաշարը՝ 46023 խմ, հատման համար նախատեսված ընդհանուր պաշարը՝ 4114 խմ, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 3333 խմ, որից շինափայտի պաշարը՝ 826 խմ, վառելափայտը՝ 2507 խմ:

Նոսրացման հատումներ նախատեսվել են ընդհանուր 361,6 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 18704 խմ, հատման համար նախատեսված ընդհանուր պաշարը՝ 1773 խտմ, այդ թվում իրացման ենթակա պաշարը՝ 1131 խմ, որից շինափայտի պաշարը՝ 98 խմ, վառելափայտը՝ 1033 խմ:

Անցումային հատումներ նախատեսվել են ընդհանուր 216.5 հեկտարի վրա, հատվածների ընդհանուր պաշարը 27319 խմ, հատման համար նախատեսված ընդհանուր պաշարը՝ 2341 խտխմ, այդ թվում իրացման ենթակա պաշարը՝ 2202 խմ, որից շինափայտի պաշարը՝ 728 խմ, վառելափայտը՝ 1474 խմ:

2023-2031թթ համար սանիտարական հատումներ նախատեսվել են ընդհանուր 194 հա անտառածածկ հատվածներում, ընդհանուր պաշարը՝ 2076 խմ, հատման համար նախատեսված ընդհանուր պաշարը՝ 531 խմ:

Արագածոտնի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 960 հա-ի վրա կազմում է 5867 խմ, այդ թվում՝ իրացման ենթակա անտառանյութի պաշարը՝ 4434 խմ, որից շինափայտը՝ 826 խմ, վառելափայտը՝ 3608 խմ:

Համաձայն կառավարման պլանի՝ 2023-2032թթ. համար նախատեսվում են անտառհիմնման միջոցառումներ՝ ընդհանուր 975.5 հա-ի վրա, որոնք տարբեր տեխնոլոգիական լուծումների կիրառման դեպքում իրագործելի են տարածքի 50-70% մակերեսի վրա, որից՝ անտառային բացատներում և ազատ տարածքներում՝ 715.4 հա, ցածր լրիվության անտառներում՝ 115.2 հա, արոտավայրերում՝ 107.5 հա, չմիակցված անտառմշակույթներում՝ 5.3 հա, ինչպես նաև նոսրուտներում՝ 32.1 հա:

Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերածին օժանդակող միջոցառումների հաշվին:

Անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

- Դեգրադացված անտառների վերականգնում տնկմամբ, փոսերով (մինչև 15° թեքության դեպքում),
- Դեգրադացված անտառների վերականգնում տնկմամբ, խրամատներով (16° և ավելի թեքության դեպքում),
- Բնական վերածի օժանդակում հանքայնացմամբ, ցանքս հարթակներում,
- Բնական վերածի օժանդակում ցանկապատումով,
- Հակաէրոզիոն, հողապաշտպան տնկարկների հիմնում,
- Ռեկուլտիվացիա,
- Անտառայգիների հիմնում /մինչև 7° թեքության դեպքում՝ փոսերով, իսկ 8-15° դեպքում՝ խրամատներով/,
- Անտառվերականգնման հատումների իրականացում,
- Խնամքի հատումների իրականացում,
- Ընտրովի սանիտարական հատումների իրականացում:

Անտառային էկոհամակարգերին սպառնացող հիմնական վտանգներն են.

- Հրդեհներ, հիվանդություններ և վնասատուներ,
- Ապօրինի անտառահատումներ, խնամքի աշխատանքների բացակայություն,





- Ապօրինի արածեցում, խոտհունձ անտառային հողերում նաև գյուղատնտեսական գործունեություն անտառամերձ գյուղատնտեսական նշանակության հողերում,
- Ապօրինի ծառահատումներ,
- Որսագողություն,
- Ուտելի բույսերի չկանոնակարգված ոչ արտադրական հավաք,
- Մարդ-բնություն կոնֆլիկտ,
- Ավիաքիմիական պայքար,
- Արոտավայրերի չկանոնակարգված շահագործման,
- Չկանոնակարգված կառուցապատում, տարածաշրջանային ինտեգրված հողօգտագործման մոտեցումների բացակայություն,
- Զրային ռեսուրսների անխնա օգտագործում,
- Չկանոնակարգված հողօգտագործում,
- Չկանոնակարգված ռեկրեացիա,
- Ապօրինի հանքարդյունահանում:

Անտառտնտեսության համար հիմնական վտանգները շարունակում են մնալ ապօրինի հատումները, արածեցումը՝ հատկապես համայնքամերձ անտառներում անասունների անարգել մուտքը, բույսերի չհամակարգված հավաքը և արոտավայրերի ոչ ճիշտ կառավարումը:

Անտառային էկոհամակարգերի և կենսաբազմազանության վրա ազդեցություն կարող է ունենալ կլիմայի փոփոխությունը՝ ջերմաստիճանի բարձրացման և խոնավության նվազման միտումները: Բուսական էկոհամակարգերի համար սպառնալիք կարող է հանդիսանալ նաև ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների տարածումը:

Նախատեսվում է խիստ վերահսկողություն սահմանել անտառտնտեսության տարածքում գտնվող բնակելի տների, առողջարանների և զբոսաշրջության նպատակով ստեղծված ենթակառուցվածքների գործունեության վրա, կանխարգելել դրանց կողմից գետերի և այլ մակերևույթային ջրահոսքերի աղտոտումը կոյուղաջրերով և կենցաղային թափոններով:

Հաշվետվությունում ներառված է զրոյական և այլընտրանքային տարբերակների նկարագրությունը, ընտրված տարբերակի հիմնավորումը:

**Եզրահանգումներ.** Հիմնադրությային փաստաթղթով նախատեսված գործողություններն ընդգրկում են անտառպետության տարածքը, որը ներառում է բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները:

Տարածքի անտառտնտեսության՝ բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառահատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային: Կենսաբազմազանության համար վտանգավոր է նաև քիմիական նյութերի միջոցով վնասատուների դեմ պայքարը: Անտառտնտեսության զարգացման համար հիմնական վտանգ է ներկայացնում նաև մարդու տնտեսական գործունեությունը՝ բուսականության այրումը կամ մաքրումը, որսագողությունը, արոտավայրերի կառավարման բացակայությունը, դրանց կանոնավոր այրումը, օրգանական և անօրգանական թափոններով կենսամիջավայրի աղտոտումը: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բնական կենսամիջավայրի խախտում և քայքայում:

Անտառի կայուն կառավարումը՝ նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը, անտառների կայուն օգտագործմանը: Այն կնպաստի անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի,



գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

Անտառների վերականգնման, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման ռազմավարական, հիմնական ռազմավարական ուղիների ապահովման, այդ թվում՝ «Հայանտառ»-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, մարդկային ռեսուրսների ուսուցողական և կրթական կենտրոնների և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանն ուղղված միջոցառումները կնպաստեն անտառի կենսամիջավայրի բարելավմանը և կայուն զարգացմանը:

Հիմնադրությամբ փաստաթղթով նախատեսվում է անտառպահպանման, անտառահատման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում: Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք են հադիսացել ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ.), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառակառավարման պլանների մշակման հրահանգը, ինչպես նաև անտառտնտեսության ոլորտը կարգավորող մի շարք ՀՀ օրենքներ, կառավարարության որոշումներ և միջազգային փաստաթղթեր:

Փորձաքննության գործընթացում «Արագածոտնի» կառավարման պլանի փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների, Արագածոտնի մարզպետարանում իրականացված հանրային քննարկումների ժամանակ հնչեցված առաջարկությունները:

### **Փորձաքննական պահանջներ**

- Հիմնադրությամբ փաստաթղթով նախատեսված միջոցառումները հնարավորինս կատարել նախատեսված ժամանակահատվածում:
- Հիմնադրությամբ փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:
- Հիմնադրությամբ փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

### **ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ**

«Սոյուտոն» ՍՊԸ կողմից ներկայացված «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2023-2032թթ. անտառչինական նախագիծ (անտառակառավարման պլան)» շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան

